

Նոր ՃՐԱԳ



ANNIVERSARY
Եռանկյա թերթի
Յուլի 2024
Ժ տարի . թիվ 2-3



26 դեկտեմբեր 2023

ԿԵԱՆՔՈՎ ՈՒ ԳՈՐԾՈՎ (ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹԻԻ 431 «ՄԱՐԶԻԿ»)

Մարմնակրթական միութիւն մը ի՞նչ գործ ունի պատմութեան, մշակոյթի եւ հոգեւոր արժէքներու հետ, կրնան հարց տալ ոմանք:

Մարմնակրթական միութեան մը գերագոյն ժողովը ինչո՞ւ զբաղի հայրենիք ունենալ-չունենալու հարցով, կրնան ըսել շատեր:

Մարմնակրթական միութիւններ կը զբաղին, պէ՛տք է զբաղին միմիայն իրենց պարտականութեամբ՝ սկաուտութեան եւ մարզախաղերու ճամբով սերունդներու դաստիարակութեամբ, կրնան աւելցնել ուրիշներ:

Այս բոլորը կրնան տեղին ու արդար արտայայտութիւններ ըլլալ բնական պայմաններու մէջ ապրող ժողովուրդներու համար, սակայն մեզի նման ժողովուրդներու համար ի՞նչ դաստիարակութիւն, ի՞նչ զբաղում, երբ գնդակն ու բաժակը կան, բայց հայրենիքը չկայ: Երբ սկաուտական կեանքը կայ, բայց այդ կեանքը հողին վրայ ապրող ժողովուրդը չկայ:



Միջոցները անիմաստ կը դառնան, երբ նպատակը կը դադրի գոյութիւն ունենալէ: Չարմանալի բան չկայ ուրեմն, եթէ Հ.Մ.Ը.Մ.ի գերագոյն ժողովը բոլոր օրակարգերէն աւելի եւ բոլոր մտահոգութիւններէն առաջ, զբաղի Արցախո՛վ, Արցախի հանդէպ Հ.Մ.Ը.Մ.ի ունեցած պարտքով: Արցախի հայութեան օժանդակութեան ծրագիրով, «Հ.Մ.Ը.Մ.ի Արցախ հիմնադրամ»ի ստեղծումով:

Արցախը Հ.Մ.Ը.Մ.ականին սրտի սերն է եւ հոգիին վերքն է: Արցախը միայն աշխարհագրութիւն եւ քարտէս չէ, լեռ ու ձոր չէ: Արցախը այն 424 եկեղեցիներն ու վանքերն են, որոնք յանձնուեցան ազերիներու: Քանի՛-քանի՛ ուխտաւորներ Աստուծոյ հետ խօսած են այդ եկեղեցիներուն եւ վանքերուն ճամբով: Որքա՛ն սուրբ ձեռքեր դէպի երկինք բարձրացած են անոնց մէջ:

Արցախը այն բազմահարիւր խաչքարերն են, որոնք սրբապղծուեցան ազերիներու կողմէ: Քանի՛-քանի՛ տաղանդներ երկնած են այդ խաչքարերը: Հաւատքի ի՞նչ մատներ դրոշմուած են այդ խաչքարերուն վրայ: Աչքերու ի՞նչ լոյսեր տկարացած են անոնց դիմաց: Արցախը այն 213 դպրոցներն են, որոնց կրթութեան լոյսը հանգեցաւ ազերիներու կողմէ: Քանի՛-քանի՛ պատանիներ ու պարմանուհիներ գրած, երգած, սորված, քալած ու վազած են այնտեղ: Դպրոցներ, ուր հայ աշակերտն ու աշակերտուհին ազգին պատմութիւնը շնչած է, անցեալի փայլուն էջերով ներշնչուած է: Դպրոցներ, ուր ազգանուէր հոգիներ եւ նկարագիրներ կերտուած են:

Արցախը 4000-է աւելի պատմամշակութային այն յուշարձաններն են, որոնք անցան ձեռքը անոնց, որոնք ո՛չ պատմութիւն ունեցած են, ո՛չ ալ մշակոյթ: Յուշարձաններ, որոնք մեր քաղաքակրթութեան կենդանի վկաներն են: Մեր սեփական պատմութիւնը, որ դարձաւ աւարը պատմութեան թշնամիներուն:

Շարունակե՛նք. Արցախը այն հողն է, որուն ծոցէն Նիկոլ Դուման եւ Խանասարի Վարդան ծնած է, Վանայ Իշխան եւ Դանիէլ Բէկ Փիրումեան հասակ առած է: Հող, որ սրբագործուած է Խամսայի մելիքներու քրտինքով, Վիգէն Չաքարեաններու եւ Արտակ Իշխանեաններու արեամբ:

Եւ դէռ, Արցախը 300 հանքավայր է, 36 ջրէլեկտրակայան է, 580 հազար հեկտար գիւղատնտեսական տարածութիւն է, երաժշտական եւ արուեստի 20 դպրոց է՝ 7000 սաներով, 10 գրադարան է՝ 400 հազար գիրքերով: Հրաժարիլ այս բոլորէն կը նշանակէ հաւաքական



ինքնասպանության դիմել: Մոռնալ այս բոլորը կը նշանակէ դաւաճանել Արցախի համար զոհուածներու կտակին:

Արցախը այսքան ցաւ է: Արցախը 120 հազար բնաւեր ժողովուրդ է, բայց մանաւանդ՝ 10 հազարէ աւելի նահատակ է, հարիւրաւոր զերիներ է, աճիւնը չվերադարձուած հերոս է, անյայտացած եւ հետքը չբացայայտուած զինուոր է:

Արցախը մեր պատմութիւնն է: Մեր ինքնութիւնն է: Մեր բռնաբարուած իրաւունքներու վերատիրացման պայքարն է: Մօտիկ անցեալին, Արցախը իր դրօշով, զինանշանով եւ քայլերգով ազգային մեր հպարտութիւնն էր: Այսօր ան մեր խոցուած արժանապատուութիւնն է: Մեր ժամանակաւոր պարտութիւնն է: Ու նաեւ, կորուսեալ մեր հպարտութիւնը վերականգնելու յանձնառութիւնն է, յիշեալ պետական խորհրդանիշները պահպանելու եւ պատուելու որոշումով:

Իսօսիլ այս բոլորին մասին, կարելոր է, այլեւ դաստիարակի՛չ է: Ընդունի, որ Արցախը կայծը վառեց հայութեան նոր ժամանակներու ազատութեան բոցին. Արցախի շնորհիւ մեր ժողովուրդը 30 տարի աւելի հայացաւ, աւելի պահանջատէր եւ մարտունակ դարձաւ: Արցախի «Երկաթէ շերեփ»ով հայութիւնը իր արժանի տեղը գրաւեց ժամանակակից ազգերու ընտանիքին մէջ,- այս արդէն Հ.Մ.Ը.Մ.ական դաստիարակութիւն է, որմով կը մեծնան, պիտի՛ մեծնան մեր ապագայ յաղթանակներուն հաւատացող այսօրուան եւ վաղուան սերունդները:

Այն սերունդները, որոնք հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովի որոշումներուն, կեանքով ու գործով պիտի պահեն այն, ինչ որ մեր նահատակները իրենց նահատակութեամբ ու արեամբ պահեցին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ ՄԱՐԶԻԿ 43-րդ տարի, Թիւ 431, 104 էջ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՄ (Արցախը մնայուն ներկայութիւն Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն մէջ)

ԻՄԲԱԳՐԱԿԱՆ (Կեանքով եւ գործով)

- ՊԱՏԳԱՄԱԲՈՐԱԿԱՆ (13-ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ
- Բացումը , - Անդամական պատկերներ ,
- Արդի ժամանակներու Պատգամաւորական Ժողովները
- Անդամական թիւերը վերջին քառորդ դարուն
- Մատնանշումներ , - Պատմութեան համար
- Խօսքեր , - Պարգեւատրում , - Հաղորդագրութիւն
- Պատգամաւորներ

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄ

- Քայլերգ , - Մամլոյ ասուլիսը
- Մասնակիցները , § Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12 բանակումները
- Բացումը , - Բացման խօսքեր , - Ընթացքը
- Յարգանքի տուրք , - Լիզպոնի 40-ամեակ , - Փակումը
- Փակման խօսքեր , - Մատնանշումներ

«ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳ

- «Արարատեան» կարգի միօրեայ հանդիպումը , - Կարգին չորրորդ սերունդը , Շնորհակալութիւն

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը ի սպաս Արցախի հայութեան





ԼՈՅՍ ՏԵՍԱԲ ՄԱՐԶԻԿ, 44-րդ տարի, Թիվ 432

Խոնարհական- «Խորին յարգանք»

- Հաղորդագրություն
- Երեք սերունդ հայեցի սպորտում, ՀՄԸՄ-ական խանդավառությամբ- Յակոբ Խաչերեան
- Որպեսզի Արցախի ՀՄԸՄ-ական մեր քրյերն ու եղբայրները կարենան դարձնել տողանցիկ Ստեփանակերտի մէջ- Տիրան Վահրատեան
- Համախմբուիլ եւ պատրաստել նորանոր հզօր սերունդներ- Լիոնի Սարմազեան
- ՀՄԸՄ-ի առենասպետներու առցանց ժողով
- Նուէր՝ ՀՄԸՄ-ի թանգարանին
- Կեդրոնական Վարչութեան հանդիպումները Նետրոլէնտներու մէջ
- Արժէքաւոր գործի մը նոյնքան արժէքաւոր թարգմանությունը
- Ներածական- Արրահամ Ահարոնեան
- Երկու խօսք- ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութիւն
- Մեր հոշակաւոր խարուկահանդէսները- Յարութ Զէքիճեան
- Վկայություններ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի փառաւոր անցեալէն (Ե.)- Ծորճիկ Ռաստիկէնեան
- Ծառայաւէր ՀՄԸՄ-ական եղբ. Համբիկ Միսաքեանի յիշատակին- ՀՄԸՄ-ի Լիբանանի Ծրջանային Վարչութիւն

Թիւր կ'ընդգրկէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի անդրադարձներ (Հարաւային Ամերիկա, Աւստրալիա, Գանատա, Արեւմտեան Մ. Նահանգներ, Արեւելեան Մ. Նահանգներ, Հայաստան, Փարիզ, Միւնիխ, Նետրոլէնտներ, Յունաստան, Լիբանան եւ Սուրիա): 56 էջ:



ԱՐՑԱԽԻ ՊԷՃ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՏԱՐԱԶՆԵՐՈՒՄ ՎՐԱՅ

15 Ապրիլ 2024-էն սկսեալ, Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ մասնաճիւղերու սկաուտական եւ մարզական շարքերը իրենց տարագներուն վրայ պիտի կրեն յատուկ պէճ մը, որ կը ներկայացնէ բռնագրաւեալ Արցախը իր գլխաւոր խորհրդանիշ՝ «Պապիկ-տատիկ»ով:

Արցախի պէճ մը ունենալու եւ տարագներու վրայ կրելու նախաձեռնությունը Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովի որոշումներէն մէկն է:

Պէճին ձեւաւորումը կատարած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միեր Դաւիթեան, Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն:





Պիտի Վերականգնիք Մեր Կամաւորներու Բանակով - ՅԱԿՈՒ ԽԱՉԵՐԵԱՆ

Հաւարուած ենք դարձեալ մայիս ամսու վերջին կիրակին, ըստ շուրջ հարիւրամեայ մեր աւանդութեան, տօնախմբելու հայոց պատմութեան ամէնէն պայծառ սիրագործութեան՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան 106-ամեակը:

Հոս ենք՝ բարձր գնահատելու 600 տարի ռայա հայր ազատատենչ յեղափոխական փաղանգի զինուորագրուողի հոգեփոխող Քրիստափոր Միքայէլեանի, Մկրտիչ Փորթուգալեանի, Աւետիս Նազարբէկեանի եւ անոնց կուսակից ընկերներու անգուգական իրագործումը:

Հոս ենք մեր ողնաշարը շտկելու եւ մեր ճակատը աւելի բարձր պահելու՝ յիշելով ԱՐԱՄ-ը եւ բոլոր-բոլոր միւս «խենթ»-երը, որոնք, երբ չէր մնացած ելք ու ճար, գտան հայոց պատմութիւնը ոսկի տառերով գրելու հնարքը:

Հոս ենք՝ յարգելու յիշատակը ողջմիտ ու պայծառատես մարդոց, որոնք հիմը դրին հայոց պետականութեան, ընտրեցին «Հայաստանի խորհուրդ», կազմեցին կառավարութիւն, հիմնեցին ազգային դրամի համակարգ, կարգաւորեցին դատական կառոյց, որդեգրեցին *զինանշան, եւ կապելով*

Արիւնից ծորած երիզ մի ԿԱՐՄԻՐ

Երկնքից պոկուած կտոր մի ԿԱՊՈՅՏ

Հասուն հասկերի շող ՆԱՐՆՉԱԳՈՅՆ,

Եւ վեց դարերի խաւարի վրայ՝ բարձրացուցին ԴՐՕՇ ԵՌԱԳՈՅՆ

Մեծապետական դաւերու պատճառով կարճ եղաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան կեանքը, բայց բաւարար՝ վերընձիւղելու ՀԱՅԿԻ ցեղը եւ իւրաքանչիւր հայու մտքին ու հոգիին մէջ դրոշմելու ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի յաւերժական գաղափարը:

Հոս ենք այսօր նշելու նաեւ ՀՄԸՄ-ի ամենաբեղուն գործունէութիւն ծաւալած, սերունդներ դաստիարակած եւ միութեան փարոս նկատուող Լիբանանի շրջանի հիմնադրութեան 100-ամեակը:

Մէկ դարու կազմակերպական, դաստիարակչական, սկաուտական եւ մարզական անհամար յաջողութիւններով հարուստ այս շրջանի իրագործումներու պատմաերիզը յաւազոյնս կրնանք միասին ուրուագծել՝ վերյիշելով ՀՄԸՄ-ին իրենց երկարամեայ ծառայութիւնը մատուցանած եւ մեզմէ առյաւէտ բաժնուած քոյր-եղբայրներու անուններ. Ազնաւորեան Սարգիս , Ալթունեան Լեւոն , Աճեմեան Սարգիս , Ապանեան Ժան , Արեւեան Ծոնի , Արզումանեան Մինաս , Արզումանեան Միսակ , Գազանճեան Կարօ , Գազանճեան Յարութիւն , Գապագեան Ատուր , Գասապեան Արօ , Գատեան Յակոբ , Գարապոյանճեան Գեորգ , Գեորգեան Վարուժան , Էսքիպաշեան Վարդգէս , Թապագեան Հրայր , Թապագեան Ֆլորա , Թերճանեան Սիմոն , Թիթեղեան Յոյակ , Թիթիւնճեան Կարօ , Թիւսիզեան Նշան , Թորիկեան Բիւզանդ , Խաչատուրեան Ժիրայր , Ծատուրեան Վարդգէս , Ծատուրեան Յովհաննէս , Կիւլպէնկեան Պատրիկ , Համամճեան Յակոբ , Հայրապետեան Վարդգէս , Մանուկեան Եղիշէ , Մկրտիչեան Սամուէլ , Մկրտիչեան Գառնիկ , Միջաւետիքեան Կրեկուար , Մուրատեան Սուրէն , Մուրատեան Վարուժան , Մուրատեան Հրանդ , Մուրատեան Յասմիկ , Յակոբեան Ալպեր , Յովհաննէսեան Նազիկ , Յովհաննէսեան Պօղոս , Յովհաննէսեան Վահագն , Նալպանտեան Ժոզեֆ , Նէնէճեան Արօ , Շահինեան Յովհաննէս , Շէմմէսեան Պետրոս , Շիմշիրեան Միհրան , Շիրինեան Պարգէս , Ոսկունի Տիգրան , Ուրֆալեան Անդրանիկ Չորպանեան Չաքար , Չոքկարեան Վահէ , Պայթարեան Յովհաննէս , Պոստոյեան Չոհրապ Պոյանճեան Ժագ , Սարգիսեան Ժիրայր , Սնտրեան Մուշեղ , Վէրիլեան Պետրոս , Տեմիրճեան Երուանդ , Տէր Կարապետեան Վարդգէս , Տէր Յարութիւնեան Յովհաննէս , Տօնիկեան Անի:

Մեպտեմբեր 1920-ին Վահան Չերազ Ալեքսանդրապոլէն ՀՄԸՄ-ի կեդրոն առաքած իր նամակին մէջ միութեան տանելիք աշխատանքներու մասին կը տեղեկացնէ.

«Չորս հոգի ենք եւ պիտի մարմնակրթենք Հայաստանը: Պիտի կազմենք սկաուտական խումբեր, պիտի հայացնենք լեզուն, հրամանները, խառնուածքները, ոգին: Պիտի մտնենք որբանոցները, ուր հազարներու զանգուած մը կայ՝ անանուն, անգոյն, անժպիտ, եւ սակայն՝ անգին»:

60 վերոյիշեալները, եւ այսօր հոս գտնուող անոնց սերնդակիցները նաեւ, եղան Վահան Չերազի նմանները, որոնք ՀՄԸՄ-ի ակումբն ու դաշտը համարեցին իրենց երկրորդ տունը, ՀՄԸՄ-ականները՝ իրենց հարազատները, եւ որոնք ՀՄԸՄ-ի մէջ տարած իրենց աշխատանքով կեանք մաշեցուցին որպէս ազգի ծառաներ:



Իր հիմնադրությունն են ցայսօր՝ հարիւր եւ վեց տարիներ, շրջանցելով կամ խորտակելով ամեն խոչընդոտ, անկոտրում կամքով ՀՄԸՄ շարունակեց պատուով կատարել ազգանուէր ու հայրենանուէր իր առաքելութիւնը հոն, ուր հայ շունչ կար ու կայ:

Հիմնեց՝ միադրներ, մասնաճիւղեր, մեկուսի շրջաններ, շրջաններ, եւ եղաւ համագաղութային միութիւն:

Հայաստան, Արցախ, Վրաստան, Ռուսիա, Լիբանան, Սուրիա, Յորդանան, Պաղեստին, Եգիպտոս, Իրաք, Քուէթ, Կիպրոս, Յունաստան, Անգլիա, Աւստրիա, Ֆրանսա, Հոլանտա, Գերմանիա, Շուէտ, Պուլկարիա, Բանատա, Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Արեւելեան Մ. Նահանգներ, Հարաւային Ամերիկա, Աւստրալիա:

Կազմեց նահատակ ցեղի անմահներէ կամաւոր բանակներ, որոնք անասան ու անդեղել, եռագոյնը բարձր պահած՝ անցան յառաջ դէպի յաղթանակ:

Տողանցեցին կարգապահ շարքերով ու հաստատ քայլերով իւրաքանչիւր հայու կամքը յարելով:

Տողանցեցին սփիւռքի բոլոր հայկական գաղութներու ցուրտ ու օտար փողոցներէն շուրջ 70 տարիներ՝ քաջ գիտնալով ու վստահեցնելով «դուրս»-ի եւ «ներս»-ի հայոց, որ կայ վերադարձ: Կայ վերադարձ մայիսեան յաղթանակներու ժամանակաշրջան:

Եւ ... հաւատարիմ իրենց խոստումին՝ մեր կամաւորներու բանակները վերադարձան ու տողանցեցին Երեւան-Հանրապետութեան հրապարակ 1994-ին եւ աւելի ուշ՝ 2019-ին, Ստեփանակերտ-Վերածնունդի հրապարակ:

Իր 106 տարիներու բեղուն գործունէութեամբ ՀՄԸՄ միշտ մնաց ազգային արմատներու կառչած եւ ազգային աւանդներու պահակ: Օտարացումի եւ ձուլումի մահացու բուքին դէմ ապահով ու տաք պատասպարան:

Ամենէն մարդաշատ, ամենէն տարածուած, ամենէն ժողովրդական մեր միութիւնը վաստակեցաւ բոլորին սերն ու յարգանքը եւ արժանաւորապէս եղաւ համայն հայութեան կազմակերպութիւնը:

106 տարի՝ յաջողութիւններ, նուաճումներ, յաղթանակներ ...

Մակայն նաեւ՝ 2020 սեպտեմբեր 27-էն նոյեմբեր 9 ...

Անհաւասար պատերազմ, 5000 ու աւելի վասն հայրենիքի նահատակ-հերոսներ, հայրենի հողերու կորուստէն մինչեւ հողատարածքներու դաւաճանական յանձնում, խունթայական հալածանքներ մայր հայրենիքի մէջ, ազգային արժեհամակարգերու ոտնահարում ու ջնջում ...

Այսօր՝

Մեր ճաշակած հացը լեղի է եւ՝ արիւնոտ թթիւմորով շաղուած,

Մեր խնդուքը վերածուած դեղին ժպիտի,

Մեր արժանապատուութիւնը՝ արատաւորուած,

Մեր վերքերը՝ խոր ու սպիները անջնջելի,

Բայց մեր կամքը՝ անխորտակելի...

Պիտի վերականգնիւնք:

Չօրաշարժի պիտի ենթարկենք մեր կամաւորներու բանակները ու քալենք յառաջ, անասան ու անդեղել, ու իրականացնենք մեր ուխտը Արարատին.-

«Հաւատա՛, կրանիթեայ ո՛վ աստուած՝ Սրբազան լեռ, հաւատա՛, որ կը հասնի՛նք, մենք կը հասնի՛նք կատարիդ...»:






Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԱՌՑԱՆՑ ԺՈՂՈՎ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչության կազմակերպությամբ, Շաբաթ, 24 Փետրուար 2024-ի կէսօրէ ետք ժամը 3-ին (Պէրտյոթի ժամով), տեղի ունեցաւ միության Շրջանային եւ Մեկուսի վարչություններու ստենասպետներուն առջանց ժողովը, մասնակցությամբ Կեդրոնական Վարչության անդամներու եւ 27 շրջաններու ստենասպետներու:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչության ստենասպետ եղբ. Յակոբ Խաչերեան ժողովին ներկայացուց նորրևոտի Կեդրոնական Վարչության քառամեայ գործունէության գլխաւոր ուղղութիւնները՝ Պատգամատրական 13-րդ Ընդհանուր Ժողովի (Հոկտեմբեր 2023, Ծաղկաձոր, Հայաստան) եւ Կեդրոնական Վարչության Ա. լիազմարի (Յունուար 2024, Արմեթ, Նետրղէնտներ) որոշումներու լոյսին տակ: Եղբայրը յատկապէս շեշտեց միության կազմակերպչական մէջ Արցախին առանցքային տեղ յատկացնելու անհրաժեշտութիւնը: Խօսեցաւ սկաւտական եւ մարզական տարագներու վրայ Արցախի պէճի որդեգրման, Արցախի հիմնադրամի աշխատանքներուն եւ Արցախը դաստիարակչական ծրագիրներու մէջ նկատի ունենալու անհրաժեշտութեան մասին:

Եղբ. Խաչերեան լայնօրէն անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.Ի նորաստեղծ երիտասարդական ճիւղին: Ան արտայայտուեցաւ նաեւ ցամաքամասային ձեռնարկներուն (բանակումներ, մարզախաղեր, միջ-դիւանական հանդիպումներ) թափ տարու կարեւորութեան մասին: Եղբայրը հանգամանօրէն ներկայացուց «Հրաշք»ի փորձառութեան տարածման, ինչպէս նաեւ՝ 2023-2027 քառամեակին համար նախատեսուած Հ.Մ.Ը.Մ.Ի սկաւտական, մարզական, քարոզչական, դաստիարակչական եւ տնտեսական ծրագիրները:

Չեկուցումին աւարտին, եղբ. Խաչերեան պատասխանեց ժողովի մասնակիցներու հարցումներուն եւ նշեց, թէ Կեդրոնական Վարչության հրաւերով այսուհետեւ ստենասպետներու նման ժողովներ, օրակարգի յատուկ կէտերով, պիտի գումարովին երեք ամիսը անգամ մը:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԱՌՑԱՆՑ ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչության կազմակերպությամբ, Ծաբաթ, 8 Յունիս 2024 -ի կեսօրէ ետք ժամը 4-ին (Պէյրուսի ժամով), տեղի ունեցաւ միութեան Շրջանային եւ Մեկուսի վարչութիւններու ատենապետներու առցանց երկրորդ ժողովը, մասնակցությամբ Կեդրոնական Վարչության անդամներու եւ 20 շրջաններու ատենապետներու:

Կեդրոնական Վարչության ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան ժողովին սկիզբը ներկայացուց Հոկտեմբեր 2023-ին ընտրուած Կեդրոնական Վարչության եօթը ամսուան գործունէութեան գլխաւոր բաժինները, յանձնախումբերը եւ անոնց անմիջական ծրագիրները:


Եղբայր Խաչերեան յատուկ շեշտադրումով անդրադարձաւ Կեդրոնական Վարչության գալիք ամիսներու աշխատանքներուն.- սկաւառակային միջ-եւրոպական ցամաքամասային Ա. բանակում (13-20 Յուլիս, Վեսար-Օ սկաւառակային կղզի, Շուէտ), համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 8-րդ համագումար (28 Օգոստոս-2 Սեպտեմբեր, Գահիրէ, Եգիպտոս), համա-Հ.Մ.Ը.Մ.ական քարոզչական առցանց երկրորդ համագումար (Սեպտեմբեր), միջ-դիւանական 11-րդ խորհրդաժողով (Նոյեմբեր, Հայաստան):

Ապա, օրակարգի զանազան կէտերով, եղբ. Խաչերեան հրաւիրեց Կեդրոնական Վարչության կազմի անդամները՝ զեկուցելու միութեան աշխատանքային գլխաւոր մարզերուն մասին: Այսպէս, կարճ զեկուցումներով հանդէս եկան քոյրեր Թային Օրտոդեան (սկաւառակային աշխատանքներ), Սանտրա Վարդանեան («Հ.Մ.Ը.Մ. Արցախի հիմնադրամ»), եղբայրներ Վիգէն Աւագեան (քարոզչական, «Մարզիկ» պաշտօնաթերթ), Վիգէն Աբելեան եւ Սիեր Դաւիթեան (մարզական աշխատանքներ):

Առցանց ժողովին լայն անդրադարձ կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի Մեկուսի շրջանի աշխատանքներուն: Ժողովը դրական կերպով արտայայտուեցաւ Արցախի մասնաճիւղէն սկաւառակային Պէյրուսի հրաւիրելու Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչության նախաձեռնութեան մասին: Խօսուեցաւ նաեւ այս ամառ, 15 Յունիսէն 15 Օգոստոս, Արցախէն Հայաստան տեղահանուած 1650 պատանիներու համար, Հ.Մ.Ը.Մ.- Հ.Ա.Ս.Կ.ի բակային ճամբարներուն աջակցութեան մասին՝ մղելով որ միութեան զանազան շրջաններէն կամաւոր քոյրեր եւ եղբայրներ իրենց մասնակցութիւնը բերեն Հայաստանի Աբովեան եւ Մասիս քաղաքներուն մէջ տեղի ունենալիք մարզամշակութային այս ծրագիրին:

Ատենապետներու առցանց երկրորդ ժողովը աւարտեցաւ երեք ամիս ետք դարձեալ տեսնուելու խոստումով:

Յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային եւ Մեկուսի վարչութիւններու ատենապետներու առաջին ժողովը տեղի ունեցած էր Ծաբաթ, 24 Փետրուար 2024-ին:





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

2023-2027 քառամեակի ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչության առաջին լիազումար նիստերը տեղի ունեցան 25-27 Յունուար 2024-ին, Ալմեյօ, Նետրոլենտներ:

Պատգամաւորական 14-րդ Ընդհանուր Ժողովի որոշումներու լոյսին տակ, Կեդրոնական Վարչութիւնը մշակեց քառամեայ իր գործունէութեան ընդհանուր ուղղութիւնները՝ կարելորութեամբ ընդգծելով հետեւեալները.-

-ա) Արցախը ներկայ հանգրուանին ՀՄԸՄ-ի աշխատանքներուն մէջ ունի առանցքային տեղ: ՀՄԸՄ-ի Արցախի Մեկուսի Ծրջանը այսօր գործունէութիւնը կը շարունակէ Հայաստանի մէջ, կայք ունենալով ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի Երեսնի կեդրոնը՝ մինչեւ պատմական վերադարձ իր ակունքներուն: Հարկ է յատուկ ուշադրութեան արժանացնել Արցախի մասնաճիւղը: ՀՄԸՄ-ի աշխարհասփիւռ մասնաճիւղերը պարտականութիւնը ունին «ՀՄԸՄ-ի Արցախի հիմնադրամ»ին ճամբով աջակցելու Հայաստան հաստատուած արցախցիներու օժանդակութեան ծրագիրներուն:

Արցախի գծով, լիազումարը որդեգրեց յատուկ նշանակ մը, որ այսուհետեւ իրենց տարագներուն վրայ պիտի կրեն ՀՄԸՄ-ական բոլոր սկաուտներն ու մարզիկները:

-բ) Լիազումարը հաստատեց, որ ՀՄԸՄ-ի կենսունակութեան աղբիւրներէն մէկը երիտասարդութիւնն է, ի մասնաւորի 18-35 տարիքի այն միութենականները, որոնք սկաուտական եւ մարզական տարիներուն հրաժեշտ տալէ ետք, բեղուն եւ ներգործօ մարդու թ են իրենց գաղութներէն ներս վարչական-կազմակերպչական աշխատանքներու համար: Սոյն նպատակով, Կեդրոնական Վարչութիւնը որոշեց միութեան սկաուտական եւ մարզական ճիւղերու կողքին հաստատել կազմակերպ Երիտասարդական Ծիւղ:

ՀՄԸՄ պարտի երիտասարդական իր ճիւղով մշակել ծրագիրներ՝ կարենալ համախմբելու համար միութենական քոյրեր-եղբայրներ եւ զանազան պատճառներով հայ իրականութենէն հեռացած նոր սերունդի անդամներ, իրենց ներդրումը ունենալու հայ իրականութեան մէջ գիտակցելով, որ Սփիւռքի մաշեցնող իրականութեան դէմ յանդիման, ՀՄԸՄ-ը իրել երիտասարդութեան ամէնէն աշխոյժ եւ կազմակերպ միութիւնը, պարտաւորութիւնը ունի ազգային արժեհամակարգի հիմերու ամուր պահպանման ի մասնաւորի երիտասարդ սերունդի մօտ:

-գ) Սկաուտական եւ մարզական աշխատանքներու պարագային, լիազումարը անհրաժեշտ գտաւ կեդրոնանալ ՀՄԸՄ-ի համագաղութային կառոյցի հզօրութեան աշխատանքին վրայ: Ինչպէս նաեւ համա-ՀՄԸՄական քառամեայ ձեռնարկներու կողքին, թափ տալ ցամաքամասային նախաձեռնութիւններու, շրջանները աւելի աշխուժացնելու, փոխադարձ կապերը սերտացնելու եւ երկու տարին անգամ մը նոյն ցամաքամասի սկաուտներն ու մարզիկները իրարու քով բերելու համար:

-դ) Միութենական քարոզչութեան մարզը իր տպագիր, բանաւոր եւ էլեկտրոնային տարբերակներով արժանացաւ լիազումարի բազմակողմանի քննարկման եւ անհրաժեշտ նկատուեցաւ յատուկ աշխատանք տանիլ ժամանակակից երիտասարդութեան ակնկալութիւնները գոհացնող եւ միութեան ընդհանրական դիմագիծը ներկայացնող քարոզչական համակարգ մը ունենալու:

-ե) Միութեան կառուցային հզօրացման նպատակով, լիազումարը անդրադարձաւ նաեւ ՀՄԸՄ-ի տեղեկութիւններու շտեմարանի (Data base-ի) աշխատանքներուն եւ այդ ճամբով աշխարհասփիւռ ՀՄԸՄ-ականները իրարու կապելու առաջադրանքին:

-զ) Լիազումարը հաստատեց ՀՄԸՄ-ի տնտեսական հզօրացման պարտաւորութիւնը եւ առ այդ շարք մը որոշումներ տուաւ միութեան ֆոնտերուն աշխուժացման եւ տնտեսական ծրագիրներուն իրականացման համար:

-է) Վերջին տարիներուն ՀՄԸՄ դրական փորձառութիւն ունեցաւ «Հրաշք» ծրագիրին իրագործումով: Յատուկ խնամքի կարօտ պատանի-պարմանուհիներ ՀՄԸՄ-ի «Հրաշք»ին շնորհիւ առիթը ունեցան Մ. Նահանգներու եւ Հայաստանի մէջ խաղերու իրենց մասնակցութիւնը բերել: Այս քառամեակին ճիգ պիտի կատարուի «Հրաշք»ի փորձառութիւնը կիրարկելու ՀՄԸՄ-ական այլ շրջաններու մէջ եւս, հոն ուր համապատասխան կարելիութիւններ գոյութիւն ունին:



Եռօրեայ լիագումար նիստերու առընթեր, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը հանդիպումներ ունեցաւ Նետրըլէնտներու ՀՄԸՄ-ի երեք Մեկուսի շրջաններու՝ Ալմելոյի, Առնհեմի եւ Ալքմարի վարչութիւններուն հետ, նաեւ ներկայ գտնուեցաւ Ալմելոյի եւ Առնհեմի վարչութիւններուն՝ վաստակաւոր ՀՄԸՄ-ականներու պարգեւատրման ձեռնարկներուն: 2023-2027 քառամեակի առաջին լիագումարը նշեց ՀՄԸՄ-ի 14-րդ Կեդրոնական Վարչութեան աշխատանքներուն մեկնարկը՝ հայ կեանքի ամենէն բարդ եւ պատասխանատու այս հանգրուանին, մշակուած ծրագիրներու յաջողութեան համար հրամայական նկատելով ՀՄԸՄ-ական կարելիութիւններու ամբողջական լարումը՝ ի սպաս հայ երիտասարդութեան համախմբման, ի խնդիր հայութեան եւ Հայաստանին անմնացորդ ծառայութեան:

ՀՄԸՄ-Ի
ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Պաշտօնական ընդունելութիւն՝ ի պատիւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան
Թղթակից Ալմելո

Ի պատիւ իր լիագումար նիստերը Ալմելոյի մէջ կատարող Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան , Հինգշաբթի , 25 Յունուար 2024-ի երեկոյեան ժամը 6-ին , Ալմելոյի նորակառոյց կեդրոնի «Վրէժ Չաթալեան» սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն , կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ. Ալմելո Մեկուսի շրջանի վարչութեան:

Կեդրոնին մուտքին , երկշաբթ կանգնած սկաուտներ միութեան բարձրագոյն ղեկավարութիւնը ողջունեցին «հանգի՛ստ –պատրաստ»ով եւ «Պատուի անձ»ով : Կեդրոնական Վարչութեան անդամներ սրահ մուտք գործելով գրաւեցին իրենց համար նախատեսուած տեղը: Տեղի ունեցաւ տողանցք : Հ.Մ.Ը.Մ. Ալմելոյի սկաուտական շարքերէն խումբ մը, իր պատասխանատուներուն առաջնորդութեամբ , տողանցեց Կ.Վարչութեան առջեւ եւ իր կարգին կանգ առաւ դաշտին կեդրոնը:

Կատարուեցաւ դրօշակի արարողութիւն: Չորս սկաուտներ Նիդրլանտներու , Հայաստանի , Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշները բարձրացուցին չորս քայլերգերու կատարումով:

Խօսք առաւ եւ հիւրերը ողջունեց Հ.Մ.Ը.Մ. Ալմելո մեկուսի շրջանի ատենապետ եղբ. Մասիս Վահանեան . ան ըսաւ , որ « 28 տարիներ առաջ , խումբ մը նուիրեալ հայորդիներու կողմէ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնուեցաւ Ալմելոյի մէջ : Մենք պարտինք նոյն թափով եւ ոգիով շարունակել անոնց սկսած աշխատանքը , որովհետեւ « Բարձրացիր – բարձրացուր » նշանաբանը կը պահանջէ բարձրանալ միշտ աննահանջ , յարատեւ ճիգով եւ անշահախնդիր զոհողութեամբ նուանել բարձունքներ՝ առանց ընկրկումի , անխախտ կամքով եւ անսասան հաւատքով» :

Մեկուսի շրջանի գլխաւոր իրագործումին մասին խօսելով , եղբ. Վահանեան նշեց , թէ « Այսօր , Հ.Մ.Ը.Մ.ի շրջանին համար երախտագիտութեան օր մըն է , որովհետեւ ի պատիւ իր անցեալի բոլոր ղեկավարներուն , սկաուտական եւ մարզական





շարքերուն եւ իր բոլոր յանձնախումբերուն եւ մանաւանդ գաղութի զօրակցութեան , ան կարողացաւ ունենալ իր սեփական կեդրոնը: Եւ ահա, այսօր, պատիւը ունինք հիւրընկալելու Հ.Մ.Ը.Մ.ի Կ.Վարչութեան կազմը այս կեդրոնէն ներս , գումարելու համար իր առաջին լիազու- մարը: Անկասկած , Ալմելոյի շրջանին եւ գաղութին համար բարոյական մեծ աջակցութիւն եւ նշանակութիւն ունի այս այցելութիւնը » նշեց ան:

Այս առիթով , ատենապետ եղբայրը ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Կ. Վարչութեան եւ շեշտեց « Կը խոստանանք միշտ բարձր պահել այն դրօշը , որ աւանդ ձգուեցաւ մեզի : Կը խոստանանք նաեւ, որ մեր ժողովուրդի ծոցէն ծնած այս միութիւնը պիտի շարունակէ տալ ախոյեաններ , դեկավարներ եւ կամաւոր բանակ»:

Հուսկ , եղբ. Վահանեան իր խօսքը եզրափակեց ըսելով . « Քալե՛նք միասնաբար , վճռական ու հաստատաբայլ , քալե՛նք հայութիւնը ունենալով մեր աչքին առջեւ ու հոգիներուն մէջ: Մեր երթը ըլլայ յաղթանակն , մինչեւ հայ ժողովուրդի ամբողջական յաղթանակը , ազատ , անկախ ու միացեալ Հայաստանի կերտումը»:

Վերջին արտայայտուողը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կ.Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչարեան , որ հանդէս եկաւ սրտի խօսքով մը : Եղբայրը գոհունակութիւն յայտնեց հանդիսութեան տողանցքով մասնակցած սկաուտական շարքերուն համար , նշելով , թէ այդ կրտսեր Հ.Մ.Ը.Մ.ականներուն սիրոյն կ'արժէ մեր հաւատքը ամուր պահել եւ գործել հայրենիքի սէրով , հայութեան հանդէպ սէրով:

Եղբ. Խաչարեան հայ ժողովուրդի ներկայ իրավիճակին անդրադառնալով , յայտնեց, որ մենք կը կարծենք հասած ըլլալ յաղթանակի մը , 70 տարուան պայքարէ , դժուար օրերէ , Յեղասպանութեան ճանաչման պահանջատիրութենէ եւ Հայ Դատի պայքարէ ետք: Սակայն , ափսոս , որ մեր ճամբան տակաւին երկար է եւ փշոտ: Մենք եկած ենք այստեղ գօտեպնդելու , նոր թափով ու եռանդով շարունակելու մեր ճամբան , Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով հա՛ ժողովուրդի ծառայութեան ճամբան , մինչեւ մեր բոլոր երազանքներուն իրականացումը :

Հ.Մ.Ը.Մ.ի Կ.Վարչութեան ատենապետը նաեւ շեշտեց , որ ընելիք շատ ունինք , յատկապէս նման գաղութներու մէջ , ուր եկեղեցիին եւ դպրոցի կողքին՝ Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութիւնը կենսական է եւ համախմբող: « Ես կը հաւատամ մեր յաղթանակին: Վստա՛հ հ, որ դուք ալ կը հաւատաք , ուրկէ որ ըլլաք՝ Իրաքէն , Սուրիայէն թէ Լիբանանէն: Մեր երթը պիտի շարունակենք միասնաբար , բոլորին ճիգերով եւ ամէնուն համար» , եզրակացուց եղբ. Խաչարեան:

ԾԱՆՕԹԱՅՄԱՆ ԸՆԹՐԻՔԸ

Նոյն օրը , երեկոյեան , ժամը 8-ին , նորակառոյց կեդրոնին մէջ տեղի ունեցաւ մտերմիկ ընթրիք մը՝ ի պատիւ Հ.Մ.Ը.Մ.ի Կ. Վարչութեան: Ընթրիքին խօսքեր արտասանեցին , միութենական յուշեր եւ տպաւորութիւններ ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելո Մեկուսի շրջանի վաստակաշատ անդամները , գաղութին պատկան մարմիններու ներկայացուցիչներ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կ. Վարչութեան անդամներ: Ընթրիքին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ. Առնիեմ մասնաճիւղի վարչականներ , « Դուման»ի Կ.Կ.ի շրջանի « Արամ Մանուկեան» կոմիտէի , Հ.Յ.Դ « Գարեգին Նժդեհ» երիտասարդական միութեան , Հ.Յ.Դ. Պատանեկան Միութեան եւ ՀՕՄ-ի ներկայացուցիչները , մասնաճիւղին անցեալի ատենապետերը , սկաուտական օժանդակ յանձնախումբի եւ խմբապետական կազմի անդամները , մարզական յանձնախումբերու ներկայացուցիչները , ինչպէս նաեւ՝ տիկնաց յանձնախումբին ժրաջան անդամները , որոնք երեք օր շարունակ համադամ ճաշերով պատուեցին աշխարհի շորս ծագերէն ժամանած Հ.Մ.Ը.Մ.ական հիւրերը:





«ԾՐԱԳ»Ի ՀԱԶՈՒԲԱԳԻԲՏ ԹԻԲ ՄԸ ՆՈՒԲԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Հինգշաբթի , 25 Յունուար 2024-են , Հ.Մ.Ը.Մ.ի Կ.Վարչության ի պատիվ կազմակերպուած ընդունելութեան ընթացքին , Հ.Մ.Ը.Մ. Ալմելո մեկուսի շրջանի « Նոր Ծրագր » ելեկտրոնական պարբերաթերթի խմբագրութիւնը անակնկալ մը հրամցուց ներկաներուն , երբ խմբագրութեան անդամ եղբ. Յարութիւն Պաղտասարեան Հ.Մ.Ը.Մի « Վարդգէս Տէր Կարապետեան թանգարան»ին նուիրեց աւելի քան 30 տարի առաջ , Պաղտաստի մէջ լոյս տեսած «Ծրագր» մեքենագրեալ ներքին լրատուին Դեկտեմբեր 1992-Յունուար 1993 –ի հազուադիւտ մէկ օրինակը: «Ծրագր»ի յիշեալ թիւը «Թիւ 4» յանձնուեցաւ Կ.Վարչութեան ատենադպիր եւ «ՄԱՐԶԻԿ» պաշտօնաթերթի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեանին:



Յայտնենք , որ «Ծրագր» ի հետեւողութեամբ , Հ.Մ.Ը.Մ. Ալմելո 1993 -էն ի վեր կը հրատարակէ « Նոր Ծրագր»ը՝ ելեկտրոնային տարբերակով եւ տարին չորս թիւ:

Հ.Մ.Ը.Մ.ական մամուլի գանձարանը հարստացնող «Ծրագր»ի յիշեալ թիւը ունի հետեւեալ բովանդակութիւն .-

- Արարելէն բացման խօսք.
- Խմբագրական « Նոր Տարի».
- Չեռնագնդակ , տղջկանց վոլիպոլ , սուսերամարտ , թէնիս , պոլինկ « լուրեր մասնաճիւղէն».
- Ուժ եւ հպարտութիւն.
- Կիները ըստ Յակոբ Պարոնեանի.
- Ողիմպիական խաղերուն մետալներ շահած հայ մարզիկներ .
- Եղբ. Գարեգին Մարգիս Միմոնեան » Մարգիկ Զերբուկէն» .
- Երկրաշարժներու պատահարներ հայկական շրջաններու մէջ թուականներով.
- Ակամայ զուարճալի վրիպակներ հայ թերթերու մէջ .
- Յոբելեանական.
- Իրաքի Հ.Մ.Ը.Մ. ի ողիմպիական խաղերը.
- Արշաւ – բանակում Հ.Մ.Ը.Մ.էն դուրս .
- Փայտէ նշանակ.
- Պահուած բառ.
- Տեղեկութիւն հէնտպոլի մասին « արարելէն».
- Մտերիմ խրատներ երիտասարդներուն.
- Սառստան Հիւսէյնի օրով ծաղկած մարմնակրթութիւնը Իրաքի մէջ « արարելէն».
- 1993-ի տարեկան օրացոյց.





Հ.Մ.Ը.Մ.ի Կ.Վարչության հանդիպումները եւ այցելությունները

Այնպիսի մեջ իրենց եռօրեայ կեցության ընթացքին , Հ.Մ.Ը.Մ.ի Կ.Վարչությունը լիազումար իր նիստերուն առնթեր հանդիպումներ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Այնթապի եւ Ալքմառի մեկուսի շրջաններու վարչություններուն հետ: Աւելի ուշ , Կ.Վարչությունը Առնիեմի մեջ հանդիպում մըն ալ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղի վարչության հետ:

Կ.Վարչության այցելեցին Այնթապի հոգեւոր հովիւ Մաշտոց Քինյ. Պաղտասարեան , եկեղեցւոյ վարչության երկարամեայ ատենապետ Օնիկ Քելիչի եւ հոգաբարձութեան անդամներ:

Փոխադարձաբար, Կ.Վարչության անդամները այցելութիւն մը տուին Այնթապի Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ անոր կիցը ստեղծուած Հայոց Յեղասպանութեան խաչքարերու պուրակ:Եկեղեցի այցելութեան ընթացքին , Հ.Մ.Ը.Մ.ականներ մօտէն ծանօթացան հայերէնի դասընթացքներու հետեւող փոքրիկներու եւ հայկական պարախումբի փորձերու:



Հ.Մ.Ը.Մ.ի Ալքմառի վարչականներու հետ:

Հ.Մ.Ը.Մ.ի Առնիեմի վարչութեան հետ:



Ներկայացնամք Հ.Մ.Ը.Մ.ի Կ. Վարչության Կազմին՝

Հ.Մ.Ը.Մ.ի Արմելոյի Մեկուսի Ծրջանի Վաստակաշատ Անդամներու Պարգևատրման հանդիսություն

Թղթակից Արմելո

Ծարաթ , 27 Յունուար 2024-ը յիշատակելի օր մը եղաւ Արմելոյի հայութեան համար ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ. Արմելո մեկուսի շրջանին համար մասնաւորապէս: Աւելի քան 150 հայորդիներ այդ օր ժամադրուած էին Հ.Մ.Ը.Մ. Արմելոյի նորակառոյց կեդրոնի « Վրէժ Չաթալեան» սրահին մէջ ներկայ գտնուելու վաստակաշատ հինգ Հ.Մ.Ը.Մ.-ականներու պարգևատրման հանդիսութեան: Ներկաներու շարքին էին Հ.Յ.Դ « Դուման»ի Կ.Կ.ի , Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան » կոմիտէի ներկայացուցիչները, ՀՕՄ-ի Արմելոյի մասնաճիւղի վարչական քոյրեր , Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ մասնաճիւղի վարչականներ եւ Արմելոյի եկեղեցւոյ վարչութեան անդամներ:

Հանդիսութեան յատուկ փայլք կուտար Հ.Մ.Ը.Մ.ի Կ.Վարչութեան կազմին ներկայութիւնը: Իր լիազումար առաջին նիստերը Արմելոյի մէջ կատարող Հ.Մ.Ը.Մ.ի Կ. Վարչութիւնը այդ օր վկայ պիտի ըլլար գնահատանքի եւ երախտագիտութեան անմոռանալի հանդիսութեան մը, որուն ընթացքին պիտի մեծարուէին Իրաքէն մինչեւ Նեղրլանտներ՝ Հոլանտա Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան ամբօրէն կառչած հինգ քոյրեր եւ եղբայրներ, վաստակաւորներ , հաւատաւոր միութենականներ:

Հանդիսութիւնը սկսաւ երեկոյեան ժամը 9-ին , Հ.Մ.Ը.Մ. Արմելոյի մասնաճիւղի վարչական քոյր Փաթիլ Տատուրեանի բացման խօսքով եւ մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ: Ապա , հնչեցին Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգերը:

Հանդիսութեան խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ. Արմելո մասնաճիւղի ատենապետ եղբ. Մասիս Վահանեան եւ մէկ առ մէկ ներկայացուց միութեան « Ծառայութեան » շքանշանին արժանացող քոյրերն ու եղբայրները :

Մեկուսի Ծրջանի Ատենապետին խօսքը

Եղբայր ատենապետը իր խօսքին սկիզբը յայտնեց , որ Հ.Մ.Ը.Մ.ը եզակի է իր ծնունդով: Եզակի իր առաքելութեամբ ու աշխատանքով: Հ.Մ.Ը.Մ. ը մարզական կամ սկաւտական սովորական միութիւն մը չէ, այլ՝ մարդակերտումի եւ հայակերտումի նուիրուած գաղափարական շարժում է: Ապա, ան պարգևատրեալ քոյրեր ու եղբայրներ ներկայացուց հետեւեալ ձեւով.-



-Քոյր ՍՈՆԱ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Քոյր Սոնա Տէր Ղազարեան ծնած է 1938 Թ.ին , Քերքուկ - Իրաք : Հ.Մ.Ը.Մ. Այմեյօ մասնաճիւղի անդամ է 2005 Թ.էն : Միշտ աշխատած է տիկնանց յանձնախումբի պատասխանատու : Մաս կազմած է գեղարուեստական երեկոներու՝ նախապատրաստելով սկաուտներու արտասանութիւնները : Իրեն համար Հ.Մ.Ը.Մ. ը կը նշանակէ « հայ դպրոց , հայ տուն , հայ ընտանիք եւ հայ մշակոյթ »՝ Ատուծմէ կը խնդրէ , որ պահէ Հ.Մ.Ը.Մ.ը եւ իր անդամները , յուսալով որ Հ.Մ.Ը.Մ.ը կը շարունակէ հայակերտումի իր առաքելութիւնը : Իր յոյսը երիտասարդութիւնն է : Ան կ'ըսէ « դուք էք , որ պիտի շարունակէք միութեան աշխատանքը եւ միասնաբար բարձրացնէք Հ.Մ.Ը.Մ.ի անունը եւ իր «Բարձրացի՛ր – բարձրացուր» նշանաբանը :



-Եղբ. ԳԵՂԱՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Եղբ. Գեղամ Մարտիրոսեան ծնած է 1949-ին , Չախօ-Իրաք : Հ.Մ.Ը.Մ. Այմեյօ մասնաճիւղի անդամ է 1996 Թ.էն : Տարիներու ընթացքին եղած է Հ.Մ.Ը.Մ.ի վարչական անդամ : Գործած է զանազան յանձնախումբերու մէջ : Եղբ. Գեղամ տարիներու ընթացքին բազմաթիւ գործեր կատարած է օգնելու բոլորին , Հ.Մ.Ը.Մ.ի մէջ թէ դուրս , օրինակ ծառայելով իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.-ականի : Իր վերջին աշխատանքներէն է Հ.Մ.Ը.Մ. Այմեյօյի նոր կեդրոնին ի նպաստ դրամահաւաքը : Եղբօր շնորհիւ կարելի դարձած է շօշափելի գումար մը սպահովել՝ յօգուտ նոր շէնքին : Հ.Մ.Ը.Մ. Այմեյօն իրեն համար մեծ նշանակութիւն ունի , ո՛չ միայն իբրեւ միութիւն , այլեւ՝ կեանքի մէկ մաս , որուն սիրով նուիրած է ան իր ժամանակը : երազն է , որ Հ.Մ.Ը.Մ. Այմեյօն աւելի մեծանայ եւ ներգրաւէ գաղութի բոլոր հայերը :



-Քոյր ՎԱՐԴԱՆՈՅՇ ԹՈՍՈՒՆԵԱՆ

Քոյր Վարդանոյշ Թոսունեան ծնած է 1939 Թ.ին , Պարսա – Իրաք : Հ.Մ.Ը.Մ.ի անդամ է 20 տարիէ աւելի : Գործած է տիկնաց յանձնախումբին մէջ : Միշտ պատրաստ եղած է Հ.Մ.Ը.Մ.ի աջակցելու : Տարիներ շարունակ ան սիրալոյսով մասնակցութիւն բերած է տիկնաց յանձնախումբի բոլոր աշխատանքներուն : Իրեն համար Հ.Մ.Ը.Մ.ը կը նշանակէ « Հայ օճախ օտար երկրի մէջ , ուր Հ.Մ.Ը.Մ.ական ոգիով կը կարողանանք դաստիարակել երիտասարդութիւնը եւ պահել հայութիւնը » : Իր երազն է Հ.Մ.Ը.Մ. Այմեյօն իր նոր կեդրոնով գալիք տարիներուն աւելի զօրանայ եւ աշխատանքները շարունակէ դէպի փայլուն ապագայ :



-Քոյր ՈՎՍԱՆՆԱ ԶԱԹԱԼԵԱՆ

Քոյր Ովսաննա Չաթալեան ծնած է 1947 Թ.ին , Պաղտատ – Իրաք : Հ.Մ.Ը.Մ.ի անդամ եղած յ 1973 Թ.էն եւ գործած է տիկնաց յանձնախումբի մէջ : Տարիներ շարունակ պատրաստ եղած է օժանդակելու Հ.Մ.Ը.Մ.ին եւ գործել ուր որ հարկ է : Իրեն համար դժուար է Հ.Մ.Ը.Մ.ը բացատրելը , որովհետեւ « Հ.Մ.Ը.Մ.ը իր 2-րդ տունն է , որուն պատրաստ է միշտ օժանդակելու » : Իր եւ ամուսինին՝ Վրէժ Չաթալեանին մեծ երազն էր Հ.Մ.Ը.Մ. Այմեյօյի շրջանը օժտել սեփական շէնքով : Կը ցանկանար , որ եղբ. Վրէժը եւս ներկայ ըլլար շէնքի բացումին , բայց ցաւօք կարելի չէր :





-Եղբ. ՆՇԱՆ ՇԱՀԻՆԵԱՆ

Եղբ. Նշան Շահինեան ծնած է 1948 Թ.ին Չախո-Իրաք: Հ.Մ.Ը.Մ.ի անդամ եղած է 1972 Թ.էն: Տարիներ շարունակ եղած է վարչական : Գործած է նաև մարզական յանձնախումբի մէջ: Եղած է ֆուջայոյի , պասքէթբոլի եւ վոլիբոլի խումբերու մարզիչ:Հ.Մ.Ը.Մ.ը իրեն համար «տուրք վայր է»: Իրեն համար շատ զգացական է Հ.Մ.Ը.Մ.ի մասին մտածելը: Ան միշտ պատրաստ է Հ.Մ.Ը.Մ.ի համար գործելու: Տարիներու իր երազն էր , որ Հ.Մ.Ը.Մը իր սեփական կեդրոնը ունենայ եւ գալիք սերունդները պահպանեն այդ « տուրք վայրը»:



Եղբ. Ատենապետի ծանօթացման իւրաքանչիւր խօսքէն ետք տեղի ունեցաւ «Ծառայութեան » շքանշանի եւ « գիր ծառայութեան» հաստատագիրներու փոխանցում՝ ձեռամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կ.Վարչութեան եւ Մեկուսի շրջանի վարչական անդամներու:

ԱՄԵՆՈՅԻ ՄԵԿՈՒՄԻ ԾՐՁԱՆԻ ԾԱՆՕԹԱՅՆՈՂ ՏԵՍԱՆԻԹԻ ՅՈՒՑԱԳՐՈՒԹԻԷՆ

Վաստակաշատ միութենականներու պարգևատրման յաջորդեց տեսանիւթի ցուցադրութիւն:Յուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի 28-ամեայ մասնաճիւղին երթը ծանօթացնող տեսանիւթ մը՝ 1996-էն , հիմնադրութենէն մինչեւ նորակառոյց կեդրոնի հիմնարկէքը , պաշտօնական բացումը եւ կեդրոնէն ներս ծաւալած սկաուտական եւ մարզական բեղուն գործունէութիւնը:

ՅՈՒՑԱՅՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Այս, Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի Մեկուսի շրջանի վարչութիւնը մէկական յուշանուէր յանձնեց Կ.Վարչութեան կազմի անդամներուն : Իր կարգին , Կ.Վարչութիւնը յուշանուէր մը յանձնեց Մեկուսի շրջանի վարչութեան ատենապետին:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ

Հանդիսութեան աւարտին խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կ.Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչարեան եւ ըսաւ .-

ԵՐԵՔ ՍԵՐՈՒԲԴ ՀԱՅԵՑԻ ԱՊՐՈՒՄՈՎ , Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽԱՆԴԴՎԱՌՈՒԹԵԱՄԲ (Հ.Մ.Ը.Մ. ի Կ.Վարչութեան ատենապետ Եղբ. Յակոբ Խաչարեանի խօսքը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի Մեկուսի շրջանի վաստակաշատ անդամներու պարգևատրման հանդիսութեան)

Արժանապատիւ քահանայ հայր, Յարգելի հիւրեր ,
Շատ սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ հարազատներ ,
Եկանք , տեսանք եւ վայելեցինք:

Այլ բառերով կարելի չէ ներկայացնել Հ.Մ.Ը.Մ.ի Կ.Վարչութեան Ալմելօ այցելութեան սպասարարութիւնները:

Ըիշդ է , եկանք ժողով գումարելու եւ Հ.Մ.Ը.Մ.ի համա-հայկական մեծ ընտանիքին յառաջիկայ չորս տարուան գործունէութեան ընդհանուր ուղղութիւնները ճշտելու , բայց նաև՝ եկանք վկայ ըլլալու Ալմելոյի մեր երիտասարդ մասնաճիւղին աշխոյժ, խոստմանելից եւ հաւատաւոր գործունէութեան :

Մեզմէ շատերուն համար Ալմելօն աշխարհագրական տարածք մըն էր մինչեւ քանի մը օր առաջ: Հաւանաբար կէտ մըն էր միայն քարտէզին մէջ: Բայց երբ եկանք Ալմելօ , անդրադարձանք , որ այդ կէտը խտացումն է հարազատ հայկականութեան , ջերմ հիւրընկալութեան եւ համախումբ աշխատանքի:

Արդարեւ , ինչ որ տեսանք Ալմելոյի մէջ, համեմատաբար կարճ ժամանակի մէջ ստեղծուած այս փոքր քաղաքին մէջ , միայն հիացում եւ գոհունակութիւն , նաև՝ արդար ըլլալու համար, հպարտութիւն մը պարզելէ մեզի:

Ալմելոյի մէջ մենք տեսանք հայ մարդու , Հ.Մ.Ը.Մ.ական մարդու շինարար , աշխատասէր եւ յոգնութիւն չճանցող ոգին: Մինչև Արեւելքի դժուարին պայմաններէն հեռաւոր այս քաղաքը հասնելով , մեր քոյրերն ու եղբայրները, ամէն ինչ գէրջէն սկսելու բոլոր դժուարութիւնները :յաղթահարելով , ահա , 28 տարուան մէջ Հ.Մ.Ը.Մ.ական գործունէութիւն ծաւալած են, Սկաուտական եւ մարզական կեանք ստեղծած են , հայր հայ պահելու միջոցները որոնած են: Ոչինչէն կեդրոն ստեղծած են , եկեղեցի կառուցած են , Եղեռնի նահատակաց յուշարձան



կանգնեցուցած են , շնորհիվ « Նահատակ ցեղի անմահներուն» իրենց արեւան կանչին , գոյատևելու և վերասարելու կամքին : Յարգանք բոլորին:

Մենք եկանք Արմելո և տեսանք երիտասարդ տղաք ու աղջիկներ , որոնք այնքան ամուր փարած են Հ.Մ.Ը.Մ.ին և Հ.Մ.Ը.Մ.ական այն բոլոր արժեքներուն , որոնք Սփիւռքի այս օտար ափերուն մարդը հայ կը պահեն , հայն ալ յանձնառու և նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ական կը դարձնեն:

Մենք եկանք Արմելո և ուրախութիւն մէզի , կողք-կողքի, տօնախմբուած և գօտեպնդուած տեսանք Հ.Մ.Ը.Մ.ական երեք սերունդ: Քիչ առաջ «Ծառայութեան» շքանշանի արժանացած փաստակաւորներ, այեհեր միութենականներ: Տեսանք այսօր պարտականութեան վրայ եղող երիտասարդ փարչականներ և նստեալ , ամէնէն ուրախանալիս, տեսանք մեր սպազայի գրաւականը հանդիսացող՝ սկստական շարքերու մեր պատանի ու կրտսեր Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Երեց, մինչև կրտսեր սերունդ, այսպէս , երեք սերունդ հայեցի ապրումով և Հ.Մ.Ը.Մ.ական խանդավառութեամբ տեսնելի լուսատեսութիւն և գոհունակութիւն կուտայ մեզի՝ այս երիտասարդ մասնագիտիչին և անոր շուրջ բոլորուած համակիր մեր ժողովուրդին ապագային գծով:

Այրի՛ք և շատ սպրիք քոյրեր և եղբայրներ, Հ.Մ.Ը.Մ.ի Արմելոյի անցեալի , ներկայի և ապագայի նուիրեալներ, Հ.Մ.Ը.Մ.ական « կամաւոր բանակ» ի անդամներ: Դուք որ երդուած էք ըլլալ հայ ժողովուրդի և անոր անկաստար տենչերու ծառայութեան գործադրաշին մէջ , անսպառ կորով և յաջողութիւն ձեզի:

Դուք , սիրելիներ , աւելի քան 10 տարիէ ի վեր Հ.Մ.Ը.Մ.ի ճրագը , յոյսի և յոյսի աղբիւրը վատ կը պահէք ձեր գործունէութեամբ և պաշտօնաթերթով: Թող որ ձեր ճրագը ըլլայ անմար ջահ , փարոս , գալիք բոլոր սերունդներուն համար, որպէսզի ձեր մասնագիտը իր ջանասիրութեամբ, կազմակերպուածութեամբ և միութենական նորանոր իրագործումներով դառնայ օրինակ՝ նստեալ քաղաքներու և մասնագիտերուն համար:

Օ՛ն , յառաջ:

Եղբայր ատենապետին խօսքէն ետք , հանդիսութիւնը շարունակուեցաւ հայկական երգ ու երաժշտութեամբ , միութենական խանդավառութեամբ և ազգային ոգեւորութեամբ:






Հ.Մ.Ը.Մ. ԱՆՄԵՆՈՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ Ս.ՅԱՐՈՒԹԻԱՆ ՏՕՆԻՆ ԱՐԹԻՒՆ

PAASFEEST

ELIE BERBERIAN & BAND

31 MAART

RESERVERINGEN
 Ohanes Ohanisian : (06) 53 13 66 99
 Rafi Okjian : (06) 86 42 93 82
 Hagop Kasparian : (06) 43 96 22 05

INLOOP | **AANVANG**
 19:00 UUR | 21:00 UUR

PRIJZEN INCL. MEZZE
 NIET LEDEN €50,-
 LEDEN €35,-
 4-12 JAAR €35,-
 STAGE € 10,- EXTRA P.P.

Homenetmen Almelo
 NL65 ABNA 0626 7444 23

BECKUM PALACE
 Haaksbergerstraat 166-1, 7554 PB Hengelo



VROLIJK PASEN
 ՇՆՈՐՀԱԻՈՐ Ս. ԶԱՏԻԿ
 «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՑ»,
 «ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

Հ.Մ.Ը.Մ.ԱՆՄԵԼՈ ՄԵԿՈՒՍԻ ԵՐԶԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



4 mei . Dodenherdenking dag

**KONINGS
DAG**

FAMILIEDAG

Zaterdag
27 APRIL 2024

Lenke
activiteiten
voor jong &
oud!

Barbecue voor reserveren (06 84827466)

van 12:00 tot 18:00 uur

TERRAS VAN HOMENETMEN
BURGEMEESTERSCHNEIDERSSEL 21,
7602 rk ALMELO











Չահերով Երթ

Երեքշաբթի 23 Ապրիլ 2024 Թ.ին Հ.Յ.Դ. Գարեգին Նժդեհ երիտասարդական միության կազմակերպությամբ, տեղի ունեցավ Ապրիլեան եղեռնի նահատակներու



յիշատակներու ջահերով երթ: Երթը սկիզբ արւաւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնէն դէպի Արմելո-ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին :

Երթին մասնակցեցան Հ.Յ.Դ. Արամ Մանուկեան Կոմիտէութեան, Հ.Օ.Մ.ի ներկայացուցիչներ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ Հոգեւոր հովիւն, փարչութեան անդամներ, Հ.Մ.Ը.Մ. Արմելո-ի եւ Առնիւմ-ի, Հայկական միութիւններու ներկայացուցիչներ, հարազատներ եւ միութեանս քոյրեր եւ եղբայրներ :

Երթը առաջնորդեց Հոյանտական, Հ. Հանրապետութեան, Արցախի Հանրապետութեան, Հ.Յ.Դ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակները . Երթը Արմելո-ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ բակին մէջ տեղադրուած սպրիլեան եղեռնի յուշահամալիրին կեդրոնամալէ ետք տեղի ունեցավ Հ.Յ.Դ. Գարեգին Նժդեհ երիտասարդական միութեան նահապատրաստուած յայտագիրը :





Հայ սկաուտի օր

Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո-ի սկաուտական խմբապետական կազմի կազմակերպությամբ եւ Հ.Յ.Դ. Դումանի , Արամ Մանուկեան կոմիտեի , Հ.Օ.Մ.ի , Ալմեյո-ի Ս.Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ հոգեւոր Հովիւի եւ վարչութեան , Հ.Յ.Դ. Երիտասարդական Գարեգին Նժդեհի , Հ.Մ.Ը.Մ. Առնհեմի Հոլանտայի Հ.Բ.Ը.Մ.եան , Երեւան միութեան , հայկական այլ միութիւններու ներկայացուցիչներու ներկայությամբ եւ միութեանս քոյրերու եւ եղբայրներու մասնակցությամբ . Կիրակի 25 Փետրուար 2024 Թ.ին Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո-ի կեդրոնէն ներս տեղի ունեցաւ Հայ սկաուտի օրուայ նուիրուած տօնակատարութիւն :

Տօնակատարութիւնը սկիզբ առաւ սկաուտական տողանցքով . որոնք կեդրոնէն ներս կեդրոնանալէ ետք տեղի ունեցաւ դրօշակներու բարձրացման արարողութիւնները ուր պետական օրհներգերով հերթական բարձրացուեցաւ Հոլանդական , Հ.Հանրապետութեան , Արցախի Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակները :

Դրօշակներու բարձրացման արարողութեան աւարտին բեմ բարձրացաւ միութեան սկաուտական ընդհանուր խմբապետ եղբ. Յակոբ Գասաբարեան օրուայ խօսքը ուղղելու , Եղբայրը ներկաներուն ողջունելէ ետք յայտնեց Վարդանանք տօնի եւ հայ սկաուտի օրուայ միաւորման պատգամը , ուր այսօր Հ.Մ.Ը.Մ.ի մէջ ստացուած ազգային եւ հայապահպանման դաստիարակութիւնները շարունակութիւնն է Աւարայրի ճակատամարտէն քաղուած ոգիէն :

Եղբայրի խօսքի աւարտին տեղի ունեցաւ շարք մը ազգային երգեր եւ արտասանութիւններ . որոնց աւարտին ցուցադրուեցաւ Վարդանանքի Աւարայրի ճակատամարտը կենդանի պատկերով :

Կենդանի պատկերի ցուցադրման աւարտին միութեանս ատենապետ Եղբ. Մասիս Վահանեան փոխանցեց ներկաներու վարչութեան խօսքը . Եղբ. Ատենապետը ներկաներուն ողջունելէ ետք նշեց թէ միութեանս բոլոր ձեռնարկները այս տարի 2024 թ.ը նուիրուած են Արցախին : Պատերազմները Վարդանանքէն սկսեալ մինչեւ Արցախ եւ այսօր եղած են հայ ազգի եւ հաւատքի ինքնութեան պատերազմ եւ այսօր մեր սկաուտները շարունակելու են այդ



Հ.Մ.Ը.Մ. ԱԼՄԵՆՈ ՍԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ
ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԵՒ
ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅ ՍԿԱՌՈՒՏԻ ՕՐ

DAG VAN DE ARMEENSE SCOUTING

25 FEBRUARI 2024

UITERAARD ZULLEN WIJ OOK TRADITIONELE LINZENSOEP BEREIDEN

14:00

HOMENETMEN ALMELO
(VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTERSCHNEIDERSINGEL 21,
7602 RK ALMELO

Homenetmen Almelo / ՀՄԸՄ Ալմեյո

Homenetmenalmelo






Հ.Մ.Ը.Մ. Արևելք-ի ատենապետին խօսքը Հայ Սկսումի Օրուայ առթիվ

Արժանապատիվ տէր Մաշտոց քահանայ Պատրասարեան
Հարգարժան ՀՅԴ Արամ Մանուկեան Կոմիտի ներկայացուցիչ
Հարգարժան Հայկական կազմակերպություններու եւ
միություններու ներկայացուցիչներ,
Յարգելի հիւրեր,
Միրելի ՀՄԸՄ-ական Բոյրեր եւ եղբայրներ,

Բարի էք եկած .



Փետրուար ամիսը իրայատուկ է Հ.Մ.Ը.Մ.-ի սկսումներուն համար «Հայ սկսումի օր»-ը այս տարի նուիրուած է Արցախին եւ Արցախահայրութեան իր արդար իրաւունքներուն վերատիրացման, որովհետեւ հայ սկսումը յաւապէս գիտակցէ , որ առանց Արցախի՝ մեր ամբողջ հայրենիքն ու պետականութիւնը վտանգուած է: Արցախեան կորուստի ցար այնքան մեծ է, որ մենք ազգովին կրած ենք ցախի եւ յուսահատութեան բեռին տակ: Վիճակը շատ ծանր է, ժամանակը՝ ճակատագրական:

Ուստի այս ծանր օրերուն Արցախահայրութեան կողքին ըլլալն ու զօրակցելը լոկ պարտականութիւն չէ, այլ իսկական համոզում, ազգային գիտակցութիւն եւ յարգանք, այսօր երբ Արցախը հայաթափուած է այդ սրբազան հողին համար նահատակուողներուն վեհութեան նկատմամբ: Հայ սկսումը քաղելիքներ ունի Վարդանանց սերունդէն, անոր հայրենասիրութեան եւ հայրենանուիրումի ոգիէն, որ պայքարի կը մղէ եւ յստակ պատգամ կը յղէ, որ նոյնիսկ ճակատամարտի կորուստի պարագային պատերազմը կորսնցնելու իրաւունք չունի հայութիւնը, իսկ յաղթանակներու համար մարտնչումներուն եւ անոնց կերտման ուղիին վրայ ՀՄԸՄ-ը ունի իր դերն ու ներդրումը:

ՀՄԸՄ-ի սկսումները ամէն տարի Վարդանանց հերոսներու վճռակամութենէն, հայրենասիրութենէն եւ հաստատակամութենէն ոգեւորուելով՝ կը լիցքաւորուին եւ իրենց երդումը կը վերանորոգեն:

Հ.Մ.Ը.Մ.-ի Սկսումութեան նպատակն է պատրաստել տիպար եւ բարոյական վեհ սկզբունքներով անձեր, որ Վարդան -Մամիկոնեանի նման հաւատարիմ պիտի մնան քրիստոնէական եւ հայրենասիրական հաւատքին :

Վարդան Մամիկոնեան 451 թուականին Աւարայրի դաշտը առաջնորդեց իրեն հետեւող զինուորները, եւ առանց որեւէ վախի, պատերազմեցաւ որպէսզի մեր քրիստոնէութիւնն ու հայութիւնը պահպանուի:

Նոյնպէս ալ ՀՄԸՄ-ի Սկսումները : Միշտ պատրաստ են , այս դժուար օրերուն կը դիմանան կը պայքարին այրասերման եւ ապագայնացման դէմ , կը բարձրանան ու կը բարձրաց-նեն իրենց յաջորդներ-ըր:

ՀՄԸՄ-ի սկսումութիւնը իր տարբեր բաժանմունքներով կը հանդիսանայ մատղաշ մանուկները համախմբող հոգատար այն տունը, որուն սերունդներ կը կերտուին հայրենասիրութեամբ, ազգասիրութեամբ եւ հայեցի դաստիարակութեամբ:

Սկսումութիւնը ասպետութիւն է, որովհետեւ Սկսումի մէջ կը սերմանուի եղբայրասիրութեան, անձնուրացութեան, անպատ ուժի եւ ծառայասիրութեան ոգին՝ ծառայելու ազգին, հայրենիքին եւ մարդկութեան:

Հայ Ս-կսումի օրուան առիթով կ'ուզեմ շնորհաւորել բոլոր քոյրերս եւ եղբայրներս, եւ շնորհակալութիւն յայտնել յատկապէս սկսումներու ծնողներուն որ կը քաջալերեն եւ կը մղեն իրենց զաւակներուն մաս կազմելու շարքերը եւ կը հրաւիրեն բոլոր ծնողները եւ իրենց զաւակները որոնք դեր չեն միացած, միանալու այս մեծ ընտանիքին՝ :Որ հաւատք ու յոյս կը ներշնչէ մեր ազգի եւ լեզուի գոյատեւման համար:

Ծնորհակալութիւն



հայապահպանման նախորդներու երթը :

Տօնակատարութեան աւարտին բեմ հրաւիրուեցաւ Ալմէյօ-ի Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հոգեւոր Հովիւ Տէր Մաշտոց քահանայ Պաղտասարեան իր հայրապետական օրհնութիւնը փոխանցելու : Քահանայ հայրը ներկաներուն ողջունելէ ետք , շնորհակալութեան եւ գնահատելի խօսքեր ուղղեց օրուայ տօնակատարութեան կազմակերպիչներուն . որոնք որեւէ ջանք չեն խնայած այս փորձիկներու դասաբանելու եւ այս երիտասարդութեան հայապահպանման դաստիարակութեան աշխատանքներ տանելու: Ծարունակելով որ այսօր մենք ականատես եղանք ոչ միայն հայապահպանման եռանդը այստեղ տեսնելու այլ շօշափեցիք միասնութեան ոգին , ուր այս տօնակատարութեան պատճառով վայելեցիք զանազան հայկական միութիւններու եւ կուսակցութիւններու ներկայացուցիչներու միասնութիւնը . որոնք հաւաքուած են միասին նշելու հայ սկսումսկան օրը:

Աւարտի Քահանայ հայրը օրհնեց սկսումսկան կողմէ պատրաստուած աւանդական ոսպէ ապուրը ուր աւարտուեցաւ օրուայ տօնակատարութիւնը :





Հ.Մ.Ը.Մ. Ալմելո Մեկուսի շրջանի 16-րդ Սկաուտական Ընդհանուր բանակում . 8-11 Մայիս 2024 . Հոլանտա – Տելտրն

8-11 Մայիս 2024 Թ.ին Հոլանտական Տելտրն քաղաքի բանակավայրին մեջ տեղի ունեցավ միութեանս 16-րդ ընդհանուր բանակումը . բանկումը նուիրուած էր ԱԲՑԱԽԻՆ : Բանակումին մասնակցեցան 96 սկաուտներ . առաջին անգամ ըլլալով Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ իր մասնակցութիւնը բերաւ օրուայ բանակումին 20 սկաուտներով:

Բանակումի առաջին օրը « մայիս , 8» նախապատրաստական եւ ապա պատրաստական օր էր . ուր տեղի ունեցաւ «սկաուտական սարքաւորումներու» միութեանս կեդրոնէն դէպի Տելտրնի բանակավայր տեղափոխութիւն : Բանակավայրին մեջ տեղի ունեցաւ , օրուայ մասնակից սկաուտներու ընդունելութիւն , դրօշակներու կայմի կառուցում ,վրաններու սարքում եւ ապա պատրաստութիւններ տեսնել յաջորդ օրուայ պաշտօնական բացման արարողութեան :

Երկրորդ օր « 9 Մայիս » . Տեղի ունեցաւ դրօշակներու բարձրացման արարողութիւն աւարտին մասնակից սկաուտներու ընդհանուր տողանցք , ապա պատրաստուած վրաններու քննում որոնց աւարտին սկիզբ արաւ բանակումի նախապատրաստուած յայտագիրը : Յայտագիրն էր .մարզանք ընդհանուր սկաուտներուն . Արի Արեւուշներուն արշաւ , նախապատրաստութիւններ « Ընդհանուր գիտելիքներու փոխանցում Արցախի վերաբերեալ» եւ սկաուտական գիտելիքներ . իսկ Գայիկ Արծուիկներուն դաշտային խմբային խաղեր , ձեռային աշխատանքներ եւ «Կակուղ Թ-աթիկ» գիտելիքներու դասընթացքներ: Օրը աւարտուեցաւ Հայկական խարուկահանդէտով:





Երրորդ օր « 10 մայիս» Օրը սկիզբ առավ Դրօշակի արարողութեամբ , մարզանքով եւ վրաններու քննութեամբ : Երկրորդ օրուայ յայտագիրն էր , Արի – Արեւունշերուն պատրաստուած էր դասախօսութիւն Արցախի « աշխարհագրական , պատմական , քաղաքականութեան եւ տեղի ունեցած աղետալի վերջին իրադարձութիւններու» վերաբերեալ .օրուայ դասախօսն եղաւ Եդր. Բաֆֆի Փոլոեան : Իսկ գայիկ արծուիկներու յայտագիրն եղաւ արշաւ դէպի Տէլսեն քաղաքը , ուր կարողացան իրենց ստացած տեսլական գիտելիքները գործնականի փոխանցել: օրը աւարտուեցան խաւ «Յունական» խարուկահանդէսով:

Չորրորդ օր « 11 Մայիս » Բանակումի փակման օրն էր . բանակավայրի փակման արարողութեան ներկայ գտնուեցան Ալմելօ-ի Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Մաշտոց քահանայ Պաղտասարեան , բանակումին մասնակից սկաուտներու պարագաներ , հիւրեր եւ միութեանս համակիր քոյրեր եւ եղբայրներ :

Արարողութիւնը սկիզբ արաւ սկաուտական ընդհանուր տողանցքով , դրօշակներու արարողութեամբ եւ ապա բանակումին ընդհանուր խմբապետ Եդր. Յակոբ Գասրարեանի ուղերձով . եդր. Խմբապետը ներկաներուն ողջունելէ ետք նշեց « Այս տարի , միութեանս 16 – րդ բանակումը իւրայատուկ էր իր մասնակցութեամբ ուր օրուայ բանակումին մասնակցեցան 96 սկաուտներ . իւրայատուկ էր նաեւ ուր առաջին անգամ ըլլալով Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ իր մասնակցութիւնը կը բերէ 20 սկաուտներով եւ 4 խմբապետներով .» եդր. Գասրարեանը պարզեց ներկաներուն օրուայ բանակումի Արցախի նուիրեալ պատուի նշանակութիւնը , ստացուած դասընթացքները , ազգային արժէքները եւ ապա բանակումին նախապատրաստուած « մարզական , սկաուտական եւ մարմնակրթական » յայտագիրները: Խօսքի աւարտին Եդր. Խմբապետը իր շնորհակալութեան խօսքերը ուղղեց միութեանս սկաուտական խորհուրդին , սկաուտական օժանդակ յանձնախումբին , բարոյական եւ նիւթական օժանդակ քոյր / եղբայրներուն , ներկաներուն եւ ապա սկաուտներու ընտանիքներուն:



Arshav Khump 3



Եղբ. Խմբապետի խօսքի ավարտին բեմ հրաւիրուեցաւ Ալմելօ-ի Հոգեւոր հովին իր խօսքը ուղղելու : Քահանայ հայրը ներկաներուն ողջունելէ ետք նշեց « Շնորհակալութեան եւ գնահատելի խօսքեր կուղեմ Հ.Մ.Ը.Մ. ին որ այսօր կարողացաւ 96 սկաուտներ հոս բանակավայրէն ներս համախմբել բայց երազանքը աւելին է » աւելացնելով « այստեղ նախորդ 3-4 օրերուն 96 սկաուտները դաստիարակուեցան ազգային հայոց պատմութեան արժեքներով հոս կազմակերպուեցան կարգ եւ կանոն սովորեցան » ներկաներուն նշեց « երիտասարդներ տարեք ձեր կրած փորձառութիւնները եւ փոխանցէք այլ երիտասարդներուն որ յաջորդ տարիները ձեր հետ միանան եւ համախմբուեն . տասնեակ տարիներ առաջ կարող է Հոլանտայէն ներս սկաուտական բանակումներուն թիւը այսօրուայ ներկայութիւնէ կէս թիւն էր բայց հաւատքով եւ յոյսով այսօր այս 96 սկաուտներ համախմբուեցան շարունակէք նման առաքելութիւնը որ թիւը գալիք տարիներուն կրկնապատիկ ըլլայ » :Քահանայ հայրը ավարտեց իր խօսքը օրհնութեամբ եւ Տէրունական աղօթքով:

Քահանայի խօսքի ավարտին տեղի ունեցաւ սկաուտական կարգերու եւ աստիճաններու փոխանցման արարողութիւններ , վկայագիրներու փոխանցումներ եւ լաւագոյն խումբի պարգեւատրում :

Պարգեւատրման եւ փոխանցման արարողութիւններու ավարտին, տեղի ունեցաւ 16-րդ բանակումի վերջին խարուկահանդէսը:







 Georganiseerd door de sportcommissie van Homenetmen Almelo



BASKETBAL

18-01-2024
VANAF 19:00 UUR

i JONGENS & MEISJES **☎** MELD JE AAN VIA 0619000833 !

📍 HOMENETMEN ALMELO (VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTER SCHNEIDERSSELINGEL 21, 7602 RK

WEDSTRIJD SPONSOREN

GEORGANISEERD DOOR DE SPORTCOMMISSIE VAN HOMENETMEN ALMELO

ARMEENS ZAALVOETBAL TOERNOOI

STEL JE EIGEN TEAM VAN 8 PERSONEN SAMEN EN DOE MEE!

DEELNAME KOSTEN €250,- PER TEAM
INCL. TICKETS FEESTAVOND

ZATERDAG 27 APRIL 2024
10:00 UUR
SPORTHAL DE SCHELFHORST
STINS 2, 7608JG ALMELO

Mher : (06) 84 05 40 46
Hrant : (06) 23 79 55 04

MAXIMAAL 12 TEAMS

Homenetmen Almelo / CUCU Uydubjo
Homenetmenalmelo

 GEORGANISEERD DOOR DE SPORTCOMMISSIE VAN HOMENETMEN ALMELO 

VOLLEYBALL

DAG

DONDERDAG 2 MEI 2024
VANAF 19:00 UUR



JONGENS & MEISJES

HOMENETMEN ALMELO (VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTERSCHNEIDERSSELINGEL 21, 7602 RK ALMELO

KINDERVOETBAL

MAANDAG
06-05-2024

Jongens & Meisjes

8 TOT 13 JAAR




HOMENETMEN ALMELO (VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTER SCHNEIDERSSELINGEL 21, 7602 RK ALMELO



WEDSTRIJD SPONSOREN



AUTOPOETSBEDRIJ HARDENBERG



MAGIC TOUCH CARCLEANING



Ak koerier RECLAME



S&M AUTOBEDRIJ



AUTOBEDRIJ ANDRÉ
AUTO & SERVICE



WTRADERS



Georganiseerd door de sportcommissie van Homenetmen Almelo



VOETBAL

VANAF 30 JAAR

9 MEI 2024 | 18:30 - 21:00

HOMENETMEN ALMELO (VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTER SCHNEIDERSRINGEL 21, 7602 RK



Georganiseerd door de sportcommissie van Homenetmen Almelo



BASKETBAL

VANAF 19:00 UUR

13-06-2024
VANAF 19:00 UUR



JONGENS & MEISJES



HOMENETMEN ALMELO (VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTER SCHNEIDERSRINGEL 21, 7602 RK

Հայ Մարզիկի Օրը

Հ.Մ.Ը.Մ. Այնպիսի Մեկուսի Ծրջանի վարչությունը կը շնորհաւորէ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ի նախկին եւ ներկայ, մարզական յանձնախմբերը, մարզիչները եւ մարզիկները, «Հայ Մարզիկի Օրը»: Այս օրը կը զուգադիպի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն «Ճաւարշ Բրիտանի Հայ մարզական առաջին թերթի տնօրէնի» ծննդեան 138-րդ ամեակը: «Բարձրացուր Բարձրացիր»

21 հուլիս 2024 ին Միտլթանս արահէն ներս կազմակերպուեցաւ հայ Մարզիկի օրը, տեղի ունեցաւ զանազան մրցումներ փոքրիկներու եւ երէցներու ֆուտպոլի մրցում, Իտանդալառուպետաճբ մասնակիցները աւարտեցին մրցոյթները:



«ՀԱՅ ՄԱՐԶԻԿԻ ՕՐ»

«DAG VAN DE ARMEENSE SPORTER»

HOMENETMEN ALMELO (VreJ Chatalian zaal)
BURGEMEESTERSCHNEIDERSRINGEL 21, 7602RK ALMELO

Ons terras is ook geopend voor lekkere hapjes en drankjes



ZONDAG 21 JULI

Kidsvoetbal 8-13jaar	13:30	uur
Pauze	16:00-17:30	uur
Volleybal	18:00	uur
Basketbal	19:30	uur
Voetbal 30+	20:30	uur









WEDSTRIJD SPONSOREN



Մարտի-ի ֆութպոլի մրցաշար

17-18-19 Մայիս 2024 Թ.ին , միութեանս ֆութպոլի խումբը մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ. Մարտի-ի կազմակերպուած ֆութպոլի մրցաշարին : Միջոցառումը նուիրուած էր Հ.Մ.Ը.Մ. Մարտի-ի հիմնադրութեան 100 ամեակի տարելիցի առթիւ . օրուայ մրցաշարին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի տարբեր երկիրներու եւ քաղաքներու ֆութպոլի « ինչպէս Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ. Լիօն , Վալանս , Փարիզի . Շուէտի Հ.Մ.Ը.Մ. Սողերտալեաի . Երուսաղեմի Հ.Մ.Ը.Մ. Երուսաղեմի եւ Հոլանտայէն Հ.Մ.Ը.Մ. Ալմելօի» խումբեր :

Նման մասնակցութեամբ միութեանս մարզիկները հաճելի ժամեր անցկացնելով այլ փորձառութիւններ արձանագրեցին խումբ զարգանալու նպատակով





WEDSTRIJD SPONSOREN



Սրահի ոտնագնդակի մրցաշար
 2023-24 Թ.ի Տարեշրջանի վերջին եռամսեայ KNVB ֆութբալի շրջանային
 մրցաշարերու արդիւնքները .-
 Հ.Մ.Ը.Մ. 2 (Homentmen 2) Կը մրցակցի 4րդ բաժանում աստիճանի խումբերու հետ
 -Hometmen Almelo 2 vs ZVV Beuningen 3 2-5
 - Hometmen Almelo 2 vs ZVV Beuningen 2 5-2

Հ.Մ.Ը.Մ. 2 (Homentmen 2) խումբը 2024-2025 տարեշրջանին պիտի մրցակցի KNWB ի 3
 -րդ բաժանում աստիճանի խումբերու հետ :





WEDSTRIJD SPONSOREN



Մրահի ոտնագնդակի մրցաշար
 2023-24 Թ.ի Տարեշրջանի վերջին եռամսեայ KNVB ֆութբալի շրջանային
 մրցաշարերու արդիւնքները .-
 Հ.Մ.Ը.Մ. 1 (Homentmen) Կը մրցակցի 2րդ բաժանում աստիճանի խումբերու հետ
 - Homenetmen Almelo 1 vs Drienerlo 2 7-2
 - Avanti W.1 vs Homenetmen Almelo 1 0-7
 - Homenetmen Almelo 1 vs Gramsbergen 1 5-4
 - Homenetmen Almelo 1 vs RSC! 4-3
 - Homenetmen Almelo 1 vs Juventa 12'1 5-1

Հ.Մ.Ը.Մ. 1 (Homentmen 1) ֆուլթպոլի առաջին խումբը 2024-2025 պիտի մրցակցի 1-ին
 բաժանում աստիճանի խումբերու հետ





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- ⇒ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹԻՒ 431 ՄԱՐԶԻԿ-Ի.
- ⇒ ԼՈՅՍ ՏԵՍԱԲ ՄԱՐԶԻԿ «43-րդ տարի, թիւ 431».
- ⇒ ԼՈՅՍ ՏԵՍԱԲ ՄԱՐԶԻԿ «43-րդ տարի, թիւ 432».
- ⇒ ԱՐՑԱԽԻ ՊԷԾ՝
- ⇒ ՊԻՏԻ ՎԵՐԱԿԱՆՔՆԻՆՔ ՄԵՐ ԿԱՄԱԲՈՐՆԵՐՈՒ ԲԱՆԱԿՈՎ
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի ՇՐՁԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԱՌՅԱՆՑ ԺՈՂՈՎ
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի ՇՐՁԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԱՌՅԱՆՑ ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ.
- ⇒ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ .
- ⇒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԻ ՊԱՏԻ Հ.Մ.Ը.Մ.ի Կ.ՎԱՐՉՈՒԹԵԱՆ .
- ⇒ ՃՐԱԳ -ի ՀԱՉԲԱԳԻՏ ԹԻՒ ՄԸ ՆՈՒԷՐ Հ.Մ.Ը.Մ.ի ԹԱՆԳԱՐԱՆԻՆ
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի Կ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ և ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ .
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. ԱԼՄԵԼՈ ՄԵԿՈՒՄԻ ՇՐՁԱՆԻ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՊԱՐԳԵԲԱՏՐՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ .
- ⇒ ՋԱՀԵՐՈՎ ԵՐԹ
- ⇒ ՀԱՅ ՄԿԱՈՒՏԻ ՕՐ.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ. ԱԼՄԵԼՈ ՄԵԿՈՒՄԻ ՇՐՁԱՆԻ 16-ՐԴ ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄ .
- ⇒ ՀԱՅ ՄԱՐԶԻԿԻ ՕՐ
- ⇒ ՄԱՐՍԷԼ-ի ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՅԱՇԱՐ.
- ⇒ ՄԻՈՒԹԵԱՆՍ ՍՐԱՀԻ 1ին և 2րդ ԽՈՒՄԲԵՐԸ.
- ⇒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասցե : Burgemeester Schneiderssingel 21 , 7602 RK - Almelo
 Կայք էջ . Website : homenetmenalmelo@yahoo.nl
 Facebook : Homenetmen Almelo / ՀՄԸՄ Ալմելո
 Instagram : homenetmenalmelo

Առաջարկներու համար կը խնդրուի կապ հաստատել (homenetmenalmelo@yahoo.nl) -ով